ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2021 թվականի N 581-Ա

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդիթեր Գուրգենի Ավդալյանի (անձնագիր՝ AU0352663 , տրված՝ 13.07.2021-ին) կողմից լիազորված անձի՝ Նաիրա Ժորիկի Վելիցյանի (նույնականացման քարտ՝ 010135861, տրված՝ 06.12.2017թ.-ին, 039-ի կողմից) դիմումը (մուտք՝ 24.09.2021-ի ՄԴ-486-21), անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 1825723 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումով հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 11-րդ, և 13-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետը, 50-րդ, 60-րդ և 62-րդ կետերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Սարատովկա, հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-099-0001-0002) Վարդիթեր Գուրգենի Ավդալյանի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,63587հա հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 342,5քմ մակերեսով
1) Բնակելի տունը՝ 342,5քմ, համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Հողամասի սահմանները որոշվում են՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
3. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող Վարդիթեր Գուրգենի

Ավդալյանին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝ 110,148 (հարյուր տասը հազար հարյուր քառասունութ) ՀՀ դրամ:
4. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Տնատիրությանը ՀՀ Լոռու մարզ, գյուղ Սարատովկա հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Սարատովկա, 7-րդ փողոց, թիվ 1 բնակելի տուն հասցեն (փոստային դասիչ 21-16):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 07
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2021 թվականի N 582-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 135 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-008-0228-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԻՆԵ ԳԱԼՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Գալոյանի (անձնական համարը՝ 19590420-00941, անձնագիր՝FE156859 տրված՝ 5101-իկողմից 12.02.2016թ-ին) կողմից լիազորված անձ՝ (նոտարական ակտի կոդ՝595-20210714-79-5236349) Ալիսա Ցոլակի Մանուկյանի (անձնագիր՝ AS0430038 , տրված՝ 20.12.2018-ին) դիմումը (մուտք՝ 13.08.2021-ի ՄԴ-393-21) 1993 թվականի ապրիլի 30-ի Կալինինոյի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նիստի թիվ 4 արձանագրությունից քաղվածքը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, և 60-րդ կետերը , նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 0.06 հա և կից 0'0018հա հողամասերը ընդգրկված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Կարինե Գալոյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, 10-րդ թաղամաս Գետափնյա փողոց թիվ 135 հասցեում 06-008-0228-0022 կադաստրային ծածկագրով՝ 0,0618 հա բնակավայրերի բնակելի կառուապատման հողամասի նկատմամբ, որից ըստ փաստաթղթերի 0,06հա հողամասի և առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ

իրավունքը հաստատող փաստաթղթերում սեփականատերերի կողմից նշված չափից մինչև 20 տոկոս ավելի 0,0018 հա հողատարածության նկատմամբ:
2.Հողամասի սահմանային չափերը որոշվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3.Հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Գետափնյա փողոց, թիվ 135 հողամաս հասցեն (փոստային դասիչ՝ 2101):
4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 07
ք.Տաշիր